ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Վ.Միրումյանի Ք.Կիև (Ուկրաինա) կատարած պաշտոնական գործուղման

1. **Անուն, ազգանուն**

Վախթանգ Միրումյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

Ք.Կիև, 2017թ. հունիսի 29-ից հուլիսի 1-ը

4. **Հրավիրող կողմը**

Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպություն (ՀՄՆԿ – IOTA)

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

Մասնակցություն Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպության 21-րդ վեհաժողովի աշխատանքներին

6. **Քննարկված թեմաները՝**

2017թ. վեհաժողովի տեխնիկական նստաշրջանի թեման է՝ «Ինչպես 21-րդ դարում հարկային մարմինը կարող է դիմակայել և արձագանքել քայքայիչ միտումների և նոր բիզնես մոդելների արդյունքում առաջացած հետևանքներին»:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Նստաշրջանը բաղկացած էր 2 մասից՝ տեխնիկական և վարչական:

Տեխնիկական մասի ձևաչափը բաղկացած էր լիագումար և զուգահեռ նիստերից: Առաջին նստաշրջանը ներառում էր բարձր մակարդակի բանավեճի կազմակերպում եկամուտների վարչարարության լիազորված աշխատակազմի միջև քայքայիչ թրենդների և նոր բիզնես մոդելների դրական և բացասական ազդեցությունների վերաբերյալ հարկային օրենքների պահպանման հարցում: Քննարկվում էր նաև այն, թե ինչպես հարկային մարմինը կարող է հավաքականորեն խուսափել հարկային վնասների լուրջ սպառնալիքներից և նվազեցնել միջազգային հարկային պլանավորման հնարավորությունները:

Երեք զուգահեռ նիստեր նվիրված էին հետևյալ թեմաներին.

- Համատեղ գործարար տնտեսական մոդելներ շահագործողների և օգտվողների օրինապահության ապահովման նկատմամբ մոտեցումը,
- Հարկային մարմինը արժանահավատ գրառումների բաշխված պահպանման (Բլոքչեյն) տեխնոլոգիայի դարում,
- Թվայնացված տնտեսության մարտահրավերների հետ աշխատելու համար հմուտ աշխատուժի վերապատրաստումը:

Վերջին լիագումար նիստը բաղկացած էր շնորհանդեսներից, որոնց նպատակն էր խթանել բանավեճերը և ստեղծել գաղափարներ հարկային մարմինների և փոխանակման տնտեսության խաղացողների միջև բարձրամակարդակ համագործակցության խորացման համար:

Շնորհանդեսներում ուշադրության կենտրոնում հայտնվեց այն, թե ինչ նշանակություն կունենա բլոկային համակարգը հարկային մարմնի հետագա գործունեության համար:

Վարչական նիստի ընթացքում քննարկվել և որոշումներ են ընդունվել մի շարք կազմակերպչական հարցերի շուրջ, այդ թվում՝ կազմակերպության 2018թ. աշխատանքային ծրագրի, գալիք ժամանակաշրջանի բյուջեի, կազմակերպության նախագահի, գործադիր խորհրդի և գործադիր քարտուղարի ընտրության հարցերը, որի ընթացքում պատվիրակությունը մասնակցել է համապատասխան քվեարկություններին:

Սլովակիայի հարկային ծառայությունն ընտրվել է որպես 2017-2018թթ. համար ՀՄՆԿ-ի նախագահող: Համապատասխանաբար՝ ՀՄՆԿ 22-րդ Գլխավոր վեհաժողովը տեղի կունենա Բրատիսլավայում:

Նստաշրջանի ընթացքում կայացել են երկկողմանի հանդիպումներ օտարերկրյա հարկային մարմինների պատվիրակությունների ղեկավարների հետ, այդ թվում՝

- ՀՄՆԿ գործադիր տնօրեն Մ.Պինտոյի,
- Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության ղեկավար Գ.Տաբուաշվիլիի,
- Լատվիայի պետական եկամուտների ծառայության ղեկավար Ի.Ցիրուլեի,
- Ալբանիայի հարկային ծառայության տնորենի տեղակալ Ե.Կատիաջիի,
- Արժույթի միջազգային հիմնադրամի ֆիսկալ հարցերի դեպարտամենտի խորհրդատու Խ.Տորոյի հետ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Վեհաժողովի արդյունքներով ընդունվել է պաշտոնական հաղորդագրություն:

Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները, եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Վեհաժողովին մասնակցել են շուրջ 160 պատվիրակներ՝ ՀՄՆԿ անդամ և ոչ անդամ հարկային մարմիններից, Եվրոպական միությունից, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունից, Արժույթի միջազգային հիմնադրամից, այլ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Վեհաժողովը հնարավորություն է ընձեռել դիտարկելու արդյունավետ մոտեցումներ և գործողություններ, որոնք կարող են նպաստել կամավոր կարգապահության աջակցման որակի բարելավմանը և հարկային պարտավորություններից խուսափման դեմ թիրախային պայքարին:

ՀՄՆԿ-ի 21-րդ վեհաժողովի հիմնական եզրահանգումներն ու առաջարկություններն են.

1. Օրենսդրական բացերը ստեղծում են հարկումից խուսափման ռիսկեր, և տեղիք են տալիս հարկերի պլանավորման համար: Այդ պատճառով, օրենդրությունը պետք է արագ հարմարեցվի հարկային բոլոր ասպարեզներում (օրինապահություն, պարտավորությունների գնահատում, ստուգումներ, իրավապահություն) «ձեռնարկություն-ձեռնարկություն», «ձեռնարկություն-սպառող» և «սպառող-սպառող» թվային գործունեության հետ առընչությանը.

2. Սեփական կադրերի հետ կապված հարցերում հարկային մարմինները բախվում են անձնակազմը պահելու և վերապատրաստելու մարտահրավերի հետ, ստիպված են հանդես գալ որպես հրապուրիչ գործատու՝ հմուտ և ընդունակ նոր աշխատակիցներ ներգրավելու գործում մասնավոր հատվածի հետ մրցակցելու, նոր տեխնոլոգիաներին համընթաց քայլելու և դրանց առավելություններից օգտվելու համար.

3. Թվայնացումը կարող է առավել բարդացնել նոր տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող ապրանքների և ծառայությունների մատակարարումներին հետևելը: Դա կարող է ավանդական բիզնեսի հետ մրցակցության խեղաթյուրման պատճառ դարնալ: Առանձնահատուկ անհանգստություն պատճառող ոլորտներից մեկը վերաբերվում է նոր գործարար մոդելների ի հայտ գալուն, որոնց կարևոր հատկանիշներից են շարժունությունը (օրինակ՝ ոչ նյութական արժեքներ, ավտոմատացված տնտեսական գործունեություն), կախվածությունը տվյալներից և օգտվողի մասնակցության այլ ձևերից, բազմակողմ գործարար մոդելների տարածվածությունը.

4. Հարկային մարմինները կարիք ունեն վերաիմաստավորելու իրենք իրենց, որպեսզի համապատասխանեն տնտեսությունում տեղի ունեցող փոփոխություններին և պատշաճորեն արձագանքեն հարկ վճարողների կարիքներին ու ակնկալիքներին: Հարկ վճարողներին պետք է մոտենալ ուրիշ տեսանկյունից, պետք է կառուցել նոր հարաբերություններ՝ վստահության և հաճախորդի բավարարվածության հիման վրա:

Թվային տեխնոլոգիաների և սերտկապակցված տնտեսության արագ փոփոխվող և անվերջ զարգացող աշխարհում, հարկային մարմինների համագործակցության ուղիների մշակումն ու իրագործումը, ստանդարտների սահմանումն ու կարողությունների զարգացումն ամրակցվել են միջազգային և տարածաշրջանային հարկային կազմակերպությունների գործունեությանը: Նոր քայքայիչ միտումների և գործարար մոդելների վերաբերյալ կարգավորումների և հարկային քաղաքականության շրջանակների ընդլայնմանը զուգահեռ՝ հարկային մարմիններում նոր գիտելիքներ և հմտություններ զարգացնելու համար պահանջվում է միջազգային կառույցների և տարածաշրջանային հարկային կազմակերպությունների ավելի խոր ներգրավվում՝ նշված մարտահրավերները հաղթահարելու համար:

Վեհաժողովի եզրահանգումներն ու առաջարկները կարտացոլվեն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատանքային ծրագրերում:

9. Գործուղվող

Վախթանգ Միրումյան

10. Ստորագրություն, ամսաթիվ

3 հուլիսի 2017թ.